



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. huugb abovyan.kotayq@mta.gov.am

28-ը փետրվարի 2023թ.

Սոււմգայիթի ջարդերի 35-րդ տարելիցի կապակցությամբ

Փետրվարի 28-ին լրանում է Ադրբեջանի կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացված եղեռնագործության՝ սոււմգայիթյան ջարդերի 35-րդ տարելիցը: 1988թ. փետրվարի 27-29-ը ընկած ժամանակահատվածում ադրբեջանական հրոսակախմբերի կողմից Սոււմգայիթ քաղաքի հայ բնակչության նկատմամբ իրագործված սպանդն ու տեղահանությունը, հայերի ունեցվածքի բռնազավթումը նախապես ծրագրված և կազմակերպված էր պետական մակարդակով: Այս մասին է փաստում այն հանգամանքը, որ ջարդերը ոչ միայն չեն կանխվել Ադրբեջանի պատկան մարմինների կողմից, այլև աստիճանաբար ընդգրկելով Բաքուն, Գանձակը և այլ քաղաքներ, շարունակվել են անօրինակ դաժանությամբ: Սոււմգայիթյան ջարդերի հետևանքով սպանված և տեղահանված հայության թիվը պաշտոնական Բաքուն մինչ օրս չի հրապարակում, ավելին՝ մերժում է եղեռնագործությունը, որի իրագործման միակ պատճառն այն էր, որ ազգությամբ հայ էին, իսկ գլխավոր նպատակն էր՝ ճնշել Արցախյան շարժումը:

Հայ ժողովուրդն այսօր ոգեկոչում է ջարդերի զոհ դարձած մեր հազավոր հայրենակիցների հիշատակը. 35 տարիների ընթացքում վերքերը չեն ամոքվել, կարստի ցավը չի փարատվել: Այսօր մեր կողքին ապրում են ադրբեջանական ջարդարարության հետևանքով տուժած հազարավոր հայեր, որոնց հիշողությունները դեռ թարմ են, կորցրածն անհաշվելի ու անդառնալի:

Հարգելի՛ հայրենակիցներ.

Իմ խորին վշտակցությունն են հայտնում Սոււմգայիթի ջարդերի հետևանքով տուժած հայությանը. պատմական արդարությունը վերականգնելու համար մենք միասնաբար չպետք է թույլ տանք թշնամուն խեղաթյուրել դեպքերն ու կոծկել ոճիրը: Թշնամին նույնն էր 108 տարի առաջ, նույնն էր 35 տարի առաջ, նույնն է և այսօր: Թշնամու ձեռագիրը չի փոխվել, այսօր էլ, ամիսներ շարունակ տևող Արցախի շրջափակումը խոսում է միայն Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, Արցախում էթնիկ գտում կազմակերպելու, Արցախի ժողովրդին ինքնորոշման իրավունքից զրկելու, հայ ժողովրդին ունեզրկելու և տեղիանելու ցանկության մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ